ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի, փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» հուլիսի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

1.1. ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ն և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները (ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1) 2)-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ):

1.2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

- ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար,
- ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 4-րդ չափաբաժինների մասով ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 2-րդ չափաբաժնի մասով Ույուտ Սենթր ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 5-րդ չափաբաժնի մասով ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 6-րդ չափաբաժնի մասով ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 7-րդ չափաբաժնի մասով Հասմիկ Սիմոնյան Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ-ի, ԴԻՋԻՖԼԵՔՍ ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 5-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Սմարթլայն ՍՊԸ-ի, Նարեկ Յուրիկի Կոստանյան Ա/Ձ-ի, ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի, Հասմիկ Սիմոնյան Ա/Ձ-ի, «Կոմուս» ՍՊԸ-ի, ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի, Հասմիկ Սիմոնյան Ա/Ձ-ի, Լուսիկ Խաչատրյան Նիկալայի Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 7-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2.. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա,

- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.3. 1-ին չափաբաժնի մասով՝ ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով՝ ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, ԴԻՋԻՖԼԵՔՍ ՍՊԸ-ի, ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնի մասով՝ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի, ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի, 6-րդ չափաբաժնի մասով՝ Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի, ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով՝ ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան